ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1. 1963 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы истории

Ամսագրի 11-րդ համարն սկսվում է «Կոմունիզմի կառուցումը և հասարակական գիտությունները» առաջնորդող հոդվածով, որտեղ ամփոփված են ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի նստաշրջանի արդյունքները, որը տեղի է ունեցել Մեծ Հոկտեմբերի 45-րդ տարեդարձի նախօրյակին և որտեղ քննարկվել է ակադեմիկոս Լ. Ֆ. Իլյիչովի զեկուցումը՝ կոմունիզմի ծավալուն կառուցման պայմաններում հասարակական գիտությունների զարգացման պրոբլեմների մասին:

Հոդվածում մասնավորապես ասված է.

—Հասարակական գիտությունների զարգացման հարցերին հատուկ ժողով նվիրելը այն բանի ցուցանիշն է, թե հասարակության վերաբերյալ գիտությունը ինչպիսի աչքի ընկնող դեր է խաղում կոմունիզմի ծավալուն կառուցման պայմաններում: Միաժամանակ դա հոգատարություն է նրա հետագա ստեղծագործական զարգացման համար: Պարտիայի XXII պատմական համագումարից, ՍՄԿՊ նոր Ծրագրի ընդունումից հետո առանձնապես բարեբար պայմաններ ստեղծվեցին գիտական ստեղծագործության համար: Սովետական գիտնականների, այդ թվում պատմական գիտության աշխատողների, պարտքն է՝ արդարացնել պարտիայի ու ժողովրդի բարձր վստահությունը:

«Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության պրոբլեմները Սովետական Միության Կոմպարտիայի Ծրագրում» վերնագրով հոդվածում ակադեմիկոս Ի. Ի. Մինցը առանձնացրել և քննության առակա է դարձրել ռևոլյուցիայի ընդհանուր պատնառների հարցը, ռևոլյուցիայի տեղն ու դերը միջազգային հասարակական շարժման մեջ: Անչափ մեծ է,—գրում է Մինցը,—Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դերը մարդկության գաղափարախոսության մեջ: Սոցիալիստական ռևոլյուցիայի հաջողություններով, հասարակության ռևոլյուցիոն վերափոխումների ամբողջ պրակտիկայով «ՀԱՍՏԱՏՎԵՑ ԼԵՆԻՆԻԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՎԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ»:

«Հոկտեմբերյան ռևոլյուցիան և Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների պատմական ճակատագրերը»՝ այսպես է վերնագրված Գ. Ֆ. Կիմի հոդվածը: Պատմական լայն հեռանկարով դիտելով մեր ժամանակներում տեղի ունեցող այն պրոցեսը, երբ խորտակվում է իմպերիալիզմի գաղութային սիստեմը և համաշխարհային ասպարեզ են դուրս գալիս նախկինում հնչված ժողովուրդները, հետազոտողը ակամայից դիմում է այդ իրադարձությունների ակունքներին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի անմար օրերին: Հենց Մեծ Հոկտեմբերն էր, որ բացեց պատմական նոր դարաշրջան, ստեղծեց այն անհրաժեշտ պայմանները, որոնք մի քանի տասնամյակ շարունակ որոշում էին ազգային-ազատագրական շարժման հարանուն զարգացումը գաղութային ու կախյալ երկրներում և ներկայումս հանգեցրին գաղութային սիստեմի կործանմանը:

Գ. Ն. Գոլիկովը իր հոդվածում տվել է 45 տարում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության ուսումնասիրմանը նվիրված գրականության համառոտ տեսությունը:

«Միջազգային իրադրությունը Հոկտեմբերի նախօրյակին» խորագրով հոդվածում Ա. Վ. Իգնատևը և Ա. Ե. Խոֆեն փորձել են ցալ համաշխարհային ռևոլյուցիոն հզնաժամի պատկերը 1917 թ. աշնանը, ցույց տալ նրա ազդեցությունը գինված ապստամբություն սկսելու վերաբերյալ բոլշևիկների պարտիայի որոշման և ռուսական կառավարությունների քաղաքականության վրա: Այսպիսով,—գրում են հեղինակները,—հոդվածում քննարկվում են Հոկտեմբերյան զինված ապստամբության նախօրյակի միջազգային իրադրության այն հիմնական հարցերը, որոնց վրա ուշադրություն է դարձված ՌՍԴԲ(բ)Պ Կենտկոմի 1917 թ. հոկտեմբերի 10-ի պատմական բանաձևի մեջ:

Ռ. Ա. Ցիպկինը, օգտագործելով մարզային մի շարք պետական արխիվներում եղած նյութերը, փորձել է ավելի հանգամանորեն լուսաբանել Կենտրոնական արդյունաբերական շրջանի Կար-

միր Գվարդիայի կազմակերպման պատմությունը (1917 թ. փետրվար-հոկտեմբեր):

Հանդեսի գիտա-հետազոտական աշխատանքը բարձրագույն դպրոցում բաժնում 1962 թ. մայիսին Տաշքենդում տեղի ունեցած տեսական կոնֆերանսի աշխատանքի մասին ընդարձակ հաղորդմամբ հանդես է եկել Ա. Կ. Ազիզյանը:

История СССР

Բորոդինոյի ճակատամարտի 150-ամյակին է նվիրված հանդեսի 6-րդ համարում տպագրված Լ. Գ. Բեսկրովնու հոդվածը: Այստեղ հիմնականում արծարծված է այն հարցը, որ, ի հակակշիռ ազնվականական պատմաբանների, սովետական պատմաբանները, հենվելով պատերազմի և բանակի մասին մարքս-լենինյան գիտության վրա, 1812 թ. Հայրենական պատերազմի մասին մշակել են կոնկրետ կոնցեպցիա, ըստ որի Բորոդինոյի ճակատամարտը հանդիսանում էր ռուսական բանակի հաղթանակը և որ այն մտել է Կուտուզովի ընդհանուր պլանների մեջ:

Հանգամանորեն շարադրելով ճակատամարտի ընթացքը, հոդվածագիրը նշում է, որ ռուսական բանակը ոչ միայն չէր զիջում թշնամուն, այլև գերազանցում էր նրան զենքի բոլոր տեսակներով, և որ Մոսկվայի հանձնումը ոչ թե հարկադրաբար է եղել, այլ տակտիկական հկատառումներով՝ ուժերը խնայելու և հակահարձակման անցնելու համար:

1812 թ. Հայրենական պատերազմին է նվիրված նաև Ա. Վ. Ֆաղեևի հոդվածը, որտեղ լուսաբանված է 1812 թ. Հայրենական պատերազմի հասարակական-քաղաքական կողմը: Ցույց է տրված այն դերը, որ պատերազմը խաղացել է ռուսական հասարակության գաղափարական զարգացման գործում:

Վ. Ա. Մաամյազիի «Մերձբալթյան սովետական ռեսպուբլիկաների՝ սոցիալիզմի կառուցմանն անցնելու մի քանի առանձնահատկությունների մասին (1940—1941 թթ.)» հոդվածում հեղինակը փորձում է ցույց տալ Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի սոցիալիզմի կառուցմանն անցնելու հիմնական առանձնահատկությունները 1940—1941 թթ., որոնք պայմանավորված էին այդ ռեսպուբլիկաների ՍՍՌՄ-ի կազմի մեջ մտնելու շնորհիվ: Հոդվածագիրը հիմնականում կանգ է առել հետևյալ հարցերի վրա. ա) Սովետական պետական կարգի հաստատումը, բ) Արդյունաբերության սոցիալիստական վերափոխության սկիզբը, գ) Հողային ռեֆորմը, դ) Բանվորության և գյուղացիության դաշինքի ամրապնդումը, ե) Կուլտուրական շինարարությունը:

Հանդեսում հրապարակված է նաև Ուկրաինական 3-րդ ռազմաճակատի շտաբի պետ, Սովետական Միության մարշալ Ս. Ս. Բիրյուզովի ծավալուն հոդվածը, որը վերաբերում է Հայրենական Մեծ պատերազմում ՍՍՌՄ զինված ուժերի ամենախոշոր և փառավոր հաղթանակներից մեկին, երբ 1944 թ. ամռանը 3ասսի—Քիշնև հարձակողական օպերացիայի շնորհիվ սովետական զորքերը ֆաշիստական օկուպանտներից ազատագրեցին Մոլդավիան, Դնեստրի աջափը և ապա նաև՝ Ռումինիան:

Հանդեսի Դիսկուսիաներ բաժնում հրապարակված է Ի. Դ. Կովալչենկոյի «Ռուսաստանի գյուղացիական տնտեսություններում կապիտալիզմի առաջացման մի քանի հարցերի մասին» հոդվածը, որտեղ ընթերցողի առարկա են դարձված Ռուսաստանի գյուղացիական տնտեսություններում կապիտալիզմի առաջացման պրոցեսի մի քանի տեսական ու մեթոդական հարցեր: Շատ բան,—ասված է հոդվածի վերջում,—այդ կարևոր և բարդ խնդրում վիճելի է հանդիսանում այն պատճառով, որ տեսության և մեթոդի հարցերի մշակումը ետ է մնում կուտակված փաստական նյութից: Ուստի անհրաժեշտ է, որ ուսումնասիրողներն ուշադրություն դարձնեն այդ հարցերին:

Սովետական պատմաբանների ստեղծագործական փորձը բաժնում «Պատմական հետազոտման ուղիների մասին» ընդարձակ հոդվածով հանդես է եկել Ն. Լ. Ռուբինշտեյնը:

Հաղորդումներ բաժնում հրապարակված են Յա. Վ. Ռատների «Սովետական թատրոնի պատմությունից (1917—1919 թթ.)» և Վ. Ի. Ադոյի «Ի. Ս. Ակսակովի ելույթը 1878 թ. Բեռլինի կոնգրեսի դեմ և այդ ելույթի արձագանքները Ռուսաստանում և Բուլղարիայում» հոդվածները:

Գ. Ա. Գալոյանի «Սոցիալիստական ռևոլյուցիան Անդրկովկասում բուրժուական պատմագրության լուսաբանությամբ» գրքի մասին Գ. Լ. Գամբաշիձեի գրախոսականում ասված է.

—Չնայած առանձին թերություններին, Գ. Գալոյանի աշխատությունը միանգամայն ուրախալի տպավորություն է թողնում: Այդ գրքի երևան գալով մեծապես լրացվում է այն բացը, որ կար սովետական պատմագրության մեջ: Հանդիսանալով Անդրկովկասի ժողովուրդների պատմությունը կեղծող բուրժուական գրականության ընդհանրական տեսության առաջին,

միանգամայն հաջող փորձ, գիրքը մեծ օգնություն ցույց կտա սովետական ընթերցողին:

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

Հանդեսի 5-րդ համարում «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մի քանի հարցերի լուսաբանումը պարտիայի պատմության գրականության մեջ» խորագրով հոդվածում Ի. Ֆ. Պետրովը գրում է.

—Հայտնի է, թե ինչ մեծ նշանակություն էր տալիս Վ. Ի. Լենինը ռուսական երեք ռևոլյուցիաներում բոլշևիկյան պարտիայի փորձի ուսումնասիրությանը: Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջին պատմաբանը իրավամբ հանդիսանում է ռևոլյուցիայի մեծ ստրատեգ և առաջնորդ Վ. Ի. Լենինը: Նա գցեց Հոկտեմբերի պատմության իսկական գիտական մշակման հիմքերը: Նրա աշխատությունների մեջ չգերազանցված խորությամբ բացահայտված է սոցիալիստական ռևոլյուցիայի կենդանի պատմությունը, լուսաբանված է պարտիայի և ռևոլյուցիոն զանգվածների այն հարուստ փորձը, որ ձեռք բերվեց հանուն ռևոլյուցիայի հաղթանակի մղված պայքարում:

Սույն հոդվածում հեղինակը բնաղատարար անդրադարձել է պարտպատմության մի շարք ընդհանրացնող աշխատությունների մեջ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի թեմայի լուսաբանությանը:

Խոսելով 30-ական թվականներին լույս տեսած Ն. Ն. Պոպովի, Ա. Մ. Բուրնովի, Վ. Ֆ. Կնորինի, Ն. Մ. Յարոսլավսկու աշխատությունների մասին, հոդվածագիրը նշում է, որ դրանցում լայնորեն օգտագործված են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի իրադարձություններին Լենինի տված գնահատականները: Սակայն չի կարելի հաշվի չառնել, որ վերահրատարակվելիս նրանց մեջ մտցվում էին լրացումներ ու փոփոխություններ, սկսում էր արտահայտվել Ստալինի անձնավորության պաշտամունքը՝ դրանից բխող թերություններով հանդերձ: Պարտիայի պատմության ուսումնասիրությանն այս տեսակետից հսկայական վնաս պատճառեց 1931 թ. դեկտեմբերին «Պարտիայի պատմությունը բոլշևիկորեն ուսումնասիրելու համար» Կազանովիչի ելույթը, որտեղ նա ամենկերպ երկինք է հանում Ստալինի աշխատությունները, դրանք հռչակելով պարտիայի պատմության մշակման «տիպարներ»: Կազանովիչի ելույթը պարտիայի պատմության նկատմամբ տիրացուական ու դոգմատիկ վերաբերմունքի արատավոր օրինակ էր, և փաստորեն սկզբնավորեց պարտպատմության մեջ Ստալինի դերի անգուսպ գովերգումը:

Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է բաղամացիական կռիվների պատմության առաջին հատորի մեջ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի իրադարձությունների լուսաբանության հարցում թույլ տրված սխալներին, որտեղ նույնպես բացասական ազդեցություն է ունեցել անհատի պաշտամունքը:

Մասնավորապես խոսելով ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի թերությունների մասին, հոդվածագիրը արժեքավորում է ՍՄԿՊ XX համագումարից հետո լույս տեսած աշխատությունները, որոնց մեջ հաղթահարվում են անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները:

Ինդոնեզիայի և Հնդկաստանի կոմպարտիաները Հարավ-Արևելյան Ասիայի առավել ուժեղ կոմունիստական պարտիաներն են: Նրանք ազդեցիկ բաղաքական ուժ են իրենց երկրներում: Ներկայացված լինելով պառլամենտներում, տեղական վարչական մարմիններում և վայելելով մասսայական կազմակերպությունների աջակցությունը, այդ պարտիաները առաջատար դեր են խաղում իրենց երկրների հասարակական կյանքում: Վերջին տարիներս մեծ հաջողությունների է հասել նաև Ցեյլոնի կոմունիստական պարտիան: Չնայած այդ երեք պարտիաների միջև եղած բոլոր տարբերություններին, նրանք ընդհանուր շատ բան ունեն,—ասված է Տ. Ս. Պոկատաևայի «Հարավ-Արևելյան Ասիայի կոմունիստական պարտիաները հանուն ազգային անկախության ու դեմոկրատիայի մղվող պայքարում» հոդվածում, որտեղ արված է այդ երեք պարտիաների 1948—1962 թթ. գործունեության տեսությունը:

Հանդեսի այս համարում տպագրված են նաև Ա. Պ. Կոսիցինի «Պրոլետարիատի դիկտատուրայի պատմական դերը» և Ա. Դ. Ջուրաևի «Սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման նոր փուլը» հոդվածները:

Ի. Մ. Կրիվոգուլի «Բանվոր դասակարգի հակապատերազմական ելույթները 1912 թ. աշնանը և Բազելի կոնգրեսը» վերնագրով հոդվածում լուսաբանվում է 1912 թ. աշնանը բանվորների հակապատերազմական շարժման հուժկու վերելքի պատմությունը, տրվում է այն ռևոլյուցիոն ոգու գնահատականը, որով սոգորված էր

պատերազմի դեմ ուղղված՝ Բազելի հռչակավոր մանիֆեստը, որը բարձր գնահատականի է արժանացել Վ. Ի. Լենինի կողմից: Հոդվածի համար հիմք է ծառայել Եվրոպայի բանվորական մամուլը:

Հրապարակումներ բաժնում տպագրված են Պարտիական աշխատողների Համառուսական (մարտյան) խորհրդակցության արձանագրությունները, որոնք արտացոլում են բոլշևիկյան պարտիայի գործունեությունը փետրվարյան ռևոլյուցիայից հետո մինչև Վ. Ի. Լենինի վերադարձը Ռուսաստան՝ 1917 թ. ապրիլի ըսկզբներին:

Հանդեսի այս համարում ՍՄԿՊ պատմության դասընթացի ներածական թեմայի և 14-րդ թեմայի (Պարտիան նախապատերազմյան շրջանում (1937 թ.—1941 թ. հունիս) վերաբերյալ տպագրված են կոնսուլտացիաներ:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ